ԱՆՁԻ ԿԵՆՍԻՄԱՍՏԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Հ. Շ. ՄՈՒՔՈՅԱՆ

Կենսիմաստային կողմնորոշման հիմնախնդիրը մարդկային տեսական մտքի պատմության մեջ ի սկզբանե ունեցել է իր ուրույն տեղը փիլիսոփայության, հոգեբանության, մարդաբանության, սոցիոլոգիայի ոլորտներում՝ կրելով բարդ ու բազմանշանակ դիալեկտիկական փոփոխություն։ Հիմնախնդիրը ձևավորվել է անձի ազատության, նպատակային գործունեության, անհատ-հասարակություն և անձի՝ ինքն իր և շրջապատի մարդկանց նկատմամբ ցուցաբերվող միջանձնային կենսակողմնորոշիչ արժեքային իմաստ ներկայացնող փոխհարաբերությունների զարգացման ճանապարհին։ Խնդիրը բովանդակայնանում և տեսական ծանրակշիռ փաստարկում է ստանում այն դեպքում, երբ նրա ձևավորման համար առկա են օբյեկտիվ սոցիալական պայմաններ և արարող սուբյեկտի կողմից դրսևորվող համապատասխան արժեգնահատիչ մակարդակ։

Ժամանակակից թե՛ փիլիսոփայական, թե՛ հոգեբանական և թե՛ սոցիոլոգիական գրականության մեջ կենսիմաստային կողմնորոշման արժեքային բնույթի հիմնախնդիրն իր զարգացումն ու կատարելագործումն է ստացել որոշ հեղինակների կողմից[1]։

Անձի կենսիմաստը ենթադրում է անձնական կյանքի պարբերական և ակտիվ հարաբերակցում առավել լայն սոցիալական ոլորտի՝ համամարդկային բնույթի արժեքների հետ, բայց մինչ այդ պայմանավորելով սեփական ժողովրդի կյանքն իմաստավորող հոգևոր և նյութական արժեքների գոյությունը։ Փիլիսոփայության պատմության մեջ հիմնախնդրի տվյալ կողմը ներկայացվում է որպես համապարփակի ու անհատականի իմաստի կապ և միաժամանակ իբրև կենսիմաստի գերարժեքային բնույթ։ Հարցն այն է, որ այդ կապը անհատին տրվում է ոչ թե ինքնաբավ ձևով, հենց այնպես, այլ, որ զրան նա հասնում է այս կամ այն՝ կրոնական կամ փիլիսոփայական աշխարհայացքի դաստիարակչական ներգործության շնորհիվ։ Աշխարհայացքի յուրացումն իր հերթին ընդգրկում է երկու գործոն. նախ, գիտակցության վերելք, այսինքն, շրջակա միջավայրի էմպիրիկ եսակենտրոն ընկալումից սկսած մինչև աշխարհի իրական պատկերի ստեղծման աստիճանը, որն այսպես թե այնպես բովանդակված է այս կամ այն փիլիսոփայական կամ կրոնական համակարգերի մեջ։ Երկրորդ, կյանքի արժեքների որոշակի գնահատականների յուրացում և անձի ձևավորում։ Այդ իմաստով Պ. Ալեքսեևը գրում է. «Մարդը ձգտում է աշխարհի հետ իր հարաբերություններում դեպի

---

[1] *Տե՛ս* Б. Г. Ананьев, Человек как предмет познания, М., 1968; А. Н. Леонтьев, Деятельность. Сознание. Личность. М., 1977; Проблемы формирования ценностей ориентации и социальной активности личности, М., 1984; К проблеме формирования ценностных ориентации и социальной активности личности, под ред. В. С. Мухиной, М., 1979; Ценностная ориентация, и интересы школьников: М., 1983; С. Ф. Анисимов, Духовные ценности: производство и потребление. М., 1988; Проблемы формирования ценностных ориентации и активность личности в онтогенезе, М., 1987; Р. М. Самсонов, Социальная психология и идеология, Ер., 1970; Б. Ф. Сержантов. Личность как предмет философского познания, Новосибирск, 1984; С. Л. Рубинштейн, Проблемы общей психологии, М., 1973; Л. Б. Шульц, О значении личности в философии (Философские науки, 1991, № 5) *և այլն։*

ավելի խորը՝ կենսիմաստային արժեկողմնորոշման և, որպես դրա հետևանք՝ դեպի ավելի կատարյալ աշխարհայացքային սկզբունքներ»[2] *(այս և հետագա ընդգծումները մերն են—Հ. Մ.)։ Անձի կենսիմաստի մեջ առաջին հերթին արձանագրված են մարդու փորձը, կյանքի մոտակա և հեռավոր նպատակները, խնդիրը, որը շոշափում է նրա ողջ կյանքի ծրագրային նպատակաուղղվածությունը, որն անձի կողմից գիտակցված է նվազ կամ բարձր մակարդակով։*

Մարդու ձևավորումը պայմանավորված է սոցիալական միջավայրի և սոցիալական ժամանակի դիալեկտիկական կապով։ Որպես բացառիկ էակ՝ ըստ իր ծագումնաբանական կառուցվածքի ու բնական հիմքերի, նա իր ընտրությամբ, իր արժեկողմնորոշումներով չունի հավասարն իր ինքնատիպ մարդաբանական տարածությունից այն կողմ։ Մարդու համար կյանքը ոչ միայն աշխարհի բազում և ընդհանրական կողմերի մեխանիկական յուրացումն է և անդամ ոչ միայն նրա հետ մերձեցումն ու սերտ փոխհարաբերությունների մեջ մտնելը, այլ աշխարհի նկատմամբ անձի կողմից իր սուբյեկտի կողմնորոշումն է աշխարհին կուլ չգնալու և այն ճանաչելու իմաստով։ Քանի որ գիտատեխնիկական սրընթաց աճը և դրան զուգահեռ գիտական գիտելիքների լարված տարբերակումը կարող են հասցնել ո՛չ միայն մարդկային անձի «ես»-ի կառուցվածքի իրական ձևախախտման, այլև նրա իմացաբանական հնարավորությունների զարգացումը կարող է ընթանալ ի վնաս աքսեոլոգիական, հաղորդակցական և գեղագիտական հնարավորությունների։ Քսաներորդ դարի մեծ հումանիստ-փիլիսոփա Ա. Շվեյցերը գրում է, որ «հասարակության, ինչպես և անհատի համար, կյանքն առանց աշխարհայացքի բարձրագույն զգացմունքի կողմնորոշման ախտաբանական խախտում է»[3]*։ Աշխարհիմացության պոզիտիվ արժեքիմաստը հնարավոր է միայն այն դեպքում և այնտեղ, ուր հետապնդվում է՝ նպատակ, դիրքորոշում, առաքելություն։ Գործոններ, որոնք նպաստում են մարդու անձն անարգել բնորոշող ուղղվածությանը և միշտ պահպանում դեպի մարդկային արժեքները ինքնակողմնորոշվող «ես»-ը, որը երբեք իր կյանքի վերջնական նպատակը չի համարում սոսկ կենսամիջոցներ հայթայթելու համար պայքարը։ Նախ, «ես»-ի՝ կենսիմաստին վերաբերող բոլոր որոշումները, ի վերջո, հանգում են միակ զժվարին խնդրի լուծմանը, այսինքն, ինչպե՞ս համատեղել արժեքների տեսքով բացարձակը և համընդհանուրը՝ միաժամանակ իրականությունն իր ողջ բազմազանությամբ ընկալելով և իմաստավորելով հանդերձ։ Երկրորդ, ինչպե՞ս կարելի է հաստատել ու ամրակրել եզակի՝ անձնական կյանքի հատուկ իմաստը բազմակողմանի և հարուստ իմաստին զուգահեռ։ Այս հիմնախնդիրը տեսական մտքի գարգացման մեջ տարբեր դարաշրջաններում իր արտացոլումն է գտել թե՛ կրոնական և թե՛ փիլիսոփայական աշխարհայացքների համակարգերում իրարից բոլորովին տարբեր մակարդակներով և լուծման տարբեր եղանակներով։ Բայց յուրաքանչյուր դարաշրջանի յուրաքանչյուր աքսեոլոգիական համակարգում առանձին անհատների մոտ համակողմանիի և փաստականորեն իրացվող անձնայինի իմաստը կրել է ոչ միատեսակ բնույթ։*

Մարդն ինչպիսի գործով էլ որ զբաղվելիս լինի, միշտ մնում է ընդգրկված ամենօրյա սովորական կենսագործունեության մեջ՝ միաժամանակ կողմնորոշվելով անհատական ու անկրկնելի իրավիճակների բարդություններում, որոնք կազմում են նրա առկա կեցության աշխարհը։ Դրա համար էլ մարդկային ստեղծագործ նախաձեռնությունը ենթադրում և, իբրև անհրաժեշտ

---

[2] П. В. Алексеев, Наука и мировоззрение, М., 1983, с. 106. *Այս մասին տե՛ս նաև* Мировоззренческая культура личности, Киев, 1986; Формирование научного мировоззрения студентов технического вуза, Тюмень, 1971; Формирование научного мировоззрения студентов в вузе, М., 1989; А. А. Горелов, Экономия, наука, мировоззрение, М., 1985.

[3] А. Швейцер, Культура и этика. М., 1973, с. 82.

բաղադրատարր, ընդգրկում է մարդու պրակտիկ արժեկողմնորոշիչ սոցիալական գիտակցությունը։ Եվ հենց այս վերջինի ձևերի մեջ է ամենից առաջ սուբյեկտին տրվում նրա կենսական, առարկայական գործունեության և հաղորդակցության աշխարհը։ «Աշխարհն իբրև օբյեկտ, ներքաշվելով սուբյեկտի գործողության ոլորտ, միջնորդավորվում է նրա նպատակներով, շահերով, ձգտումներով, և «արտասարդկային գործունեության» յուրաքանչյուր հատված այստեղ ձեռք է բերում խիստ մարդկային իմաստ և կրում է իրական փոփոխություն՝ մարդու պահանջմունքներին ու շահերին համապատասխան։ «Իրականությունը, որտեղ մենք ապրում ենք, մարդկային աշխարհն է, որն սկզբից մինչև վերջ թափանցված է մարդկային իմաստով»[4]։

Միաժամանակ, չի կարելի գործն այնպես պատկերացնել, որ ասես մարդիկ իրական աշխարհի կողքին ստեղծում են ևս իրենց կենսագործունեության առանձին և յուրակերպ «աշխարհիկները»։ Քննարկելով իրականության տարբերությունը, որը վերցված է ճանաչողության օբյեկտի իմաստով և մարդու համար կենսական աշխարհի իրողություն է, Վ. Պ. Իվանովը արդարացիորեն նշում է. «Դրանք տարբեր են ոչ թե սուբստանցիայով, այլ միայն նրանց յուրացման հիմնարար գործընթացներով և ուրվագծերով», ուրեմն դա «մարդուն տրված միևնույն իրողությունն է, բայց նրա տարբեր էական ուժերի բեկումն է պրիզմայի միջով»[5]։

Ստեղծագործ մարդու վեհությունն ու առաքինությունը, նրա անձի պատմական-հասարակական նշանակությունը, նախ, միշտ արժեքավորվել է նրանով, թե անձնավորության ներքնաշխարհը և իմաստակերտ գործունեությունը որքանո՞վ են կարողացել արժեքավորել և վերիմաստավորել աշխարհի և սոցիալական ժամանակի բազմակողմանիությունը։ Երկրորդ, թե անհատը որքանո՞վ է ի վիճակի եղել ինքնակտիվություն հանդես բերել իր ժամանակի սոցիալական, փիլիսոփայական, մարդաբանական, հոգեբանական և սոցիոլոգիական գործոնների նկատմամբ և որքանո՞վ է կարողացել արժեքավորել կամքի ազատության հիմնախնդիրը՝ դրան տալով նոր իմաստ, սոցիալական նոր հնչեղություն և մարդկային նոր որակ։

Ազատության հիմնախնդրի լուծման իր յուրակերպ տարբերակն ունի ֆրանսիացի էկզիստենցիալիստ Ա. Կամյուն։ «Ըստ Կամյուի, գոյություն ունի միայն մեկ իրական լուրջ հարց՝ ինքնասպանության հարցը։ Արժե՞ արդյոք կյանքը այնքան, որպեսզի ապրենք, կամ չարժե. այդ խնդիրը քննարկել՝ նշանակում է պատասխանել փիլիսոփայության հիմնական հարցին»[6]. «Առասպել Սիզիփոսի մասին» փիլիսոփայական ուրվագծում այսպես է ձևակերպում Ա. Կամյուն մարդկային կյանքի իմաստի վերաբերյալ հարցը։ Կամյուի տեսակետից, մարդկային մտքի ողջ պատմությունը՝ «իրենից մշտապես հրաժարվելու և անկարության» պատմություն է, քանի որ «մեր աշխարհն ինքն իրենով՝ անբանական է»։ Անիմաստ է և մարդկային կյանքը, քանի որ ընթանում է անհեթեթ աշխարհում, և դրա համար էլ ինքնասպանության մասին հարցադրումն իբրև «փիլիսոփայության հիմնական հարց» միանգամայն տրամաբանական է[7]։ Անձի կենսիմաստի մասին ըստ էության կարելի է խոսել երկու տեսակետից։ Նախ, կենսիմաստ «իր համար», որպես այդպիսին։ Երկրորդ, կենսիմաստ, «իր մեջ» և անձի կեցության մասին՝ «ուրիշների համար»։ Հարկ է ասել, որ կամքի ազատությունը մարդու վարքի գործողությունների մեջ նրա կյանքի իմաստն է «իր համար» և ընտրություն կատարելու, և կողմնորոշվելու ճնարավորության առանձնակի ու գլխավոր ուղղությունը։

---

4 Мировоззренческое содержание категории и законов материалистической диалектики, Киев, 1981, с. 113.

5 В. П. Иванов, Человеческая деятельность—познание—искусство, Киев, 1977, с. 146.

6 Մեջբերումը տե՛ս И. В. Бычко, Познание и свобода, М., 1969, էջ 116.

7 Նույն տեղում։

կամքի ազատությունը մարդուն ուղեկցող և նրա կյանքի անվերջ հակասությունների օրինաչափ լուծումն է, որը ենթադրում է, մի կողմից, ներքին հնարավորությունների իրացում և անձի բնույթի, նրա մտածելաոճի ու խելքի դրսևորման որոշակի արտահայտում։ «Ազատ,—գրում է է. Սպինոզան,—ես կանվանեի նրան, ով ղեկավարվում է միայն բանականությամբ»[8]։ Մյուս կողմից, ազատության գործընթացն իրականանում է օբյեկտիվ աշխարհի որոշակի սոցիալական արժեքների միջավայրում, որի արժեհամակարգային կառուցվածքն անհատից պահանջում է որոշակի անհրաժեշտ պահանջների սոցիալական իմաստավորում։ Պահանջներ, որոնք առաջացել են մարդու հետ, նրա սոցիալական բնույթի գործունեության կատարելագործման օբյեկտիվ շարժառիթներին համապատասխան։ «Մարդու գործունեությունը նպատակադրվում է այնպիսի շարժառիթով, որի հետևում միշտ կանգնած է սուբյեկտի պահանջը։ Շարժառիթը ոչ միայն արթնացնում է գործունեությունը և ստեղծում նրա ուղղվածությունը, այլ շատ կարևոր է, որ գործունեությանը հաղորդում է... որոշակի անձնային իմաստ...»[9]։ Միաժամանակ շատ կարևոր է իմանալ, թե ինչպիսի՞ն է պահանջների սոցիալական իմաստը և ժամանակին կոահել, թե վերջիններս դեպի ի՞նչ արժեքներ են կողմնորոշված և հարկավոր է նրանց նկատմամբ լինել շատ ուշիմ ու զգաստ։ Փորձը ցույց է տալիս, որ պահանջների անտեսումը կարող է հասցնել ոչ միայն տվյալ սոցիալական համակարգի ձևախախտման, այլև անհատի թե՛ արժեքային և թե՛ կենսապահովման գործունեության ոչ ճիշտ ընտրության։ Մարդու կամքի ազատության այդօրինակ հակասությունը սովորաբար փիլիսոփայական գրականության մեջ ներկայացվում է իբրև ազատության և պատասխանատվության հակադրամիասնություն։ Մեր կարծիքով, նախ, ազատությունը չի կարող լինել լրիվ կամայականության և անհրաժեշտության ժխտում, այլ այն ղեկավարմինավորման, իմաստավորման և արժեքավորման անհրաժեշտության մի տեսակն է։ Երկրորդ, ազատությունը ներքին պայմանավորվածության կամ ինքնաղեկավարմինավորման և ինքնաիմաստավորման ուրույն միջոց է, որն արտակարգ ձևով գիտակցվելով մարդու կողմից, դրսևորվում է իբրև նրա կամքի ազատ, կենսիմաստալից, ստեղծագործ ինքնարտահայտման իրական գործոն, որը հաստատում է նրա ազատության բնույթը. «...ազատությանն է վերաբերում ոչ միայն այն, թե ինչպես եմ ես ապրում, ոչ միայն այն փաստը, որ ես ազատությունն եմ իրագործում, այլև այն փաստը, որ ես այդ բանն անում եմ ազատորեն»[10]։ Ազատության կենսիմաստալից արտահայտությունն իր հերթին այն կարգավիճակի արժեիրացումն է, որն ընկած է անձի պահանջմունքների հիմքում և ունի որոշակի ուղղվածություն՝ որոշակիորեն նպատակայնացված մարդու կողմից, իսկ նպատակներն իրենց կառուցվածքային իմաստով լինում են՝ առօրեական-ընթացիկ, կարճատև և հեռանկարային բնույթի, որը մեզ ծավալման լայն դաշտ է բացում խոսելու միաժամանակ և՛ կյանքի, և՛ զարգացման ազատության մասին, քանի որ վերջիններս, այսպես ասած, ներկայացնում են ազատության այն երկու մակարդակները, որոնք արժեքավորվում և կենսիմաստ են ձեռք բերում միայն սոցիալական պայմանավորվածության պատճառահետևանքային սահմաններում։ Անձի կենսիմաստալից ազատությունն ընդհանրապես կախված է նրա կողմից բնության օրենքների պատճառներն առանձնացնելու կարողությունից, ճանաչման խորությունից ու չափագծերից։ Ինչպես իրավացիորեն նշում է Յ. Ա. Պոնոմարյովը, մարդը չի կարող առանձնացնել և ըմբռնել այն երևույթների պատճառները, որոնք բնության մեջ առաջանում են նրա սեփական ակտիվությունից անկախ։ Մշտապես մարդու ուշադրությանն են ներկայանում իրերի ամենաբազմաբնույթ փոխգործողությունների անվերջ թվով արդյունք-

---

8 Э. Б. Спиноза, Избранные произведения, т. 1, М., 1957, с. 567.

9 Տե՛ս В. П. Занченко, В. М. Мунипов, Основы эргономики. М., 1979, с. 31.

10 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, Ե., 1985, էջ 73։

ներ. օրինակ, մարդիկ հազարավոր տարիներ տեսել են կայծակը, բայց նրա պատճառն իմանալը հնարավոր դարձավ միայն այն ժամանակ, երբ կայծակը հարուցվեց արհեստականորեն՝ որպես մարդու գործողության հետևանք։ Այս կամ այն երևույթի իրական պատճառը մարդն ի վիճակի է բացահայտել միայն այն ժամանակ, երբ նա ինքն է դառնում տեղի ունեցող իրադարձությունների պատճառը իր սեփական «ես»-ի ինքնահանձնման և ինքնահաստատման իմաստով[11]։ Անկասկած, ինքնահաստատման անհրաժեշտ պայմանն իր մեջ պարունակում է նաև խոր և արժեքավոր կենսաբանական հիմքեր, որոնք լուրջ ուսումնասիրության սոցիալ-հոգեբանական և մարդագենետիկական ատաածություն են ընդգրկում։ Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր կենդանի օրգանիզմի (ոչ սոցիալական բնույթի) հիմքում ընկած է նրա ծագումնաբանական ծրագիրը, որն էլ հուսալիորեն երաշխավորում է շրջապատին հարմարվելու՝ այդ կենդանի էակի կենսապահովման գործընթացը, իսկ մարդու՝ իր շրջապատի նկատմամբ հարմարվելու գործընթացն ունի այլ ոբակ, որն էապես տարբերվում է զարգացման ցածր աստիճանում գտնվող կենդանական աշխարհի մնացած բոլոր տեսակների հարմարվելու գործընթացից։ Ինչո՞ւ. որովհետև բոլոր կենդանիների անհատական զարգացումը (օնթոգենեզ), այդ թվում և մարդանման կապիկների՝ իրականացվում է ծագումնաբանական ծրագրի հիման վրա՝ ներկայացնելով շրջապատող միջավայրի առանձնահատկություններից հարաբերականորեն անկախ և հարաբերականորեն ինքնատիպ ծրագրի ինքնաձևավորում, երբ մի փուլից մյուսին անցման ժամանակ այս կամ այն անհատական հատկանիշներն սկսում են ձևավորվել ոչ թե դարձյալ միջավայրի կողմից, այլ դրանք կենդանին ձեռք է բերում որպես իր տեսակին հատուկ ծագումնաբանական առանձնահատկություններ։ Այստեղ հարմարվողականության զուտ կենսաբանական իմաստը տվյալ միջավայրում ընթացիկ փոփոխություններին համընթաց և հարաբերականորեն ներդաշնակ կենսագործունեություն հաստատելու մեջ է։ Մինչդեռ, այդ տեսակետից բոլորովին այլ է մարդու վիճակը՝ ըստ նրա յուրատիպ սոմատիկ կառուցվածքի և ըստ ճանաչողական հիմնատվյալների։ Գիտակցության շնորհիվ մարդու մեջ առաջացավ սոցիալական ժառանգորդման այնպիսի համակարգ, որն աստիճանաբար դարձավ նրա ձևավորման, կատարելագործման և սոցիալական կողմնորոշման որոշիչ գործոնը, որն էլ հենց կենսաբանական էվոլյուցիայի համեմատ սոցիալական աճի տեմպերի զարգացման հսկայական հնարավորություն տվեց նրան։ Ն. Դուբինինը գրում է. «Յուրաքանչյուր մարդ ծնվում է բոլոր այն սխալներից ազատ, որոնք թույլ է տվել մարդկությունը մինչ այդ։ Կեղծ ճշմարտությունները չեն ծանրաբեռնում նրա հոգևոր հայացքը, քանի որ ոչ մի սոցիալական, գիտության կամ բարոյականության հանրագումար դեների մեջ չի գրանցվում։ Նա միշտ սկսում է սկզբից և ազատ ու ստեղծագործաբար մտնում է հասարակության մեջ և ճանաչում բնությունը։ Դա է մարդկության կեցության մեծագույն առավելությունը։ Դրանով է մարդը տարբերվում կենդանիներից՝ ապագայում հնարավորություն ունենալով հասարակական-աշխատանքային անսահման առաջընթացի համար։ Յուրաքանչյուր սերնդի մարդ սոցիալական ծրագրի միջոցով ընկալում է մարդկության զարգացման արդյունքները, և յուրաքանչյուր անգամ նրա առջև բացվում է ապագայի ստեղծագործ ճանապարհը»[12]։ Ժառանգականորեն բնության հրաշագործություն և արժեքների հիմնարժեք՝ մարդն ըստ էության օժտված է սոմատիկ կառուցվածքի այնպիսի հազվագյուտ տարրերով, որոնք իրենց հերթին ձևավորվել են այն տարրերի համակարգից, որոնցից բաղկացած է մարդկային անհատը։ Մարդուն բնորոշ հատկանիշների էվոլյուցիան կրում է որակապես բարդ և պարուրաձև բնույթ,

---

11 Տե՛ս Я. А. Пономарев, Психология творческого мышления, М., 1960, с. 34.

12 Н. П. Дубинин, Социальное и биологическое в современной проблеме человека (Вопросы философии, 1972, № 11, с. 29)

քանի որ դրանց դերակշռող մասը իրականացվում է նրա պոստնատալային վիճակում, այսինքն, ծնվելուց հետո մարդու անհատական զարգացման, առաջին հերթին՝ կյանքի ընթացքում իր ձեռք բերած խիստ կենսական-կարևորություն ներկայացնող սոցիալական արժեքների զուգորդման շնորհիվ։ Այստեղ տեղին է հիշում Ա. Լեոնտևի այն գաղափարը, որի համաձայն, «անձի հիմքում ընկած են մարդկային գործողությունների այն համաստորադաս հարաբերությունները, որոնք ծագել են իրենց զարգացման ընթացքով»[13]։ Քանի որ սոցիալական միջավայրի ազդեցությունը և նրա նկատմամբ մարդու կողմնորոշումն ընդունում են ծրագրավորման և արժեքնահատման բնույթ, ուստի տրամաբանական է, որ մարդու զարգացումը ղեկավարվում է թե գենետիկ և թե սոցիալական ծրագրերով։ Եթե գենետիկ ծրագիրը բջջի որոշակի տարածական կազմավորումն է, ուր նա իր գործողությունը ծավալում է որոշակի ժամանակային հետևողականությամբ, ապա սոցիալական ծրագիրը տառացիորեն դաստիարակչական այնպիսի ներգործությունների ամփոփ համակարգ է, որոնք անհատի նկատմամբ իրականացվում են հասարակության կողմից, հատկապես, օնթոգենեզի՝ անհատական զարգացման (կրթության, ընտանեկան, դպրոցական դաստիարակության, սոցիալական կարգավիճակի) առկայության պայմաններում։ «Մարդը՝ միակ էակն է, ըստ Բ. Գրիգորյանի, որը չունի բնության կողմից կանխորոշված կենսական ծրագիր։ Մշակութային պատմության ամենասկզբում արդեն նա հայտնվում է բաց իմաստի առջև, ինքն իր ապրելակերպն ընտրելու անհրաժեշտության և հնարավորության, ինքն իրեն և իր կենսական աշխարհն ստեղծելու առջև»[14]։ Սակայն այն, ինչ ներկայացվում է որպես մարդու զարգացման բուն սոցիալական ծրագիր, ընդհանրապես կարող է իր դերը կատարել միայն այն պայմանների դեպքում, եթե անձը կարողանա իր մեջ արթնացնել սոցիալականորեն անհրաժեշտ արժեքների նկատմամբ կողմնորոշիչ ինքնադաստիարակության այնպիսի հոգեբանական մեխանիզմ, որի ուղղվածությունն արժեքների տարածաշրջանում կվերածվի անհատի ինքնահաստատման։ Ինքնահաստատում, որը կարևորվում է ինքնագիտակցության, ինքնադաստիարակության, ինքնագնահատման, ինքնակարգավորման և ինքնակողմնորոշման որակական նոր բաղադրատարրերով։

Մարդու գիտակցությունը,—նշում է Բ. Անանևը,—միաժամանակ օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ արտացոլումն է համարվում և անհատի ներաշխարհում, «շրջապատից հարաբերականորեն մեկուսի ներքնաշխարհում ի հայտ են գալիս արժեքների համալիրներ (կենսական պլաններ և հեռանկարներ, անձնական խորը ապրումներ), կերպարների որոշակի կազմակերպություն («դիմանկարներ», «բնապատկերներ», «սյուժեներ»), պատկերացումներ, հավակնություններ և ինքնագնահատականներ»[15]։

Այն պայմաններում, երբ անձի հարաբերություններն ստանում են առանձնակի կայունություն, արտահայտվածություն և մեծ արժեքայնություն, դրանք վերածվում են անձի համար բնորոշ բնավորության գծի, բայց միաժամանակ մնալով դարձյալ հարաբերություններ։ Նման կողմնորոշիչ ինքնադաստիարակման և ինքնակատարելագործման դիալեկտիկական նպատակաուղղվածությունը խոսում է անհատի կեցության մեջ մերթ նվազ, մերթ խորը ներքին պարբերական բնույթ կրող որակական փոփոխությունների մասին, որոնք իրենց հերթին ենթադրում են ո՛չ միայն արժեքային կողմնորոշման ազատություն, այլև անհատի պահանջմունքների հատուկ իրացում՝ և՛ որպես արարքների ազատություն, և՛ որպես գործունեության ձևերի ու եղանակների, կյանքի ուղու ազատ ընտրություն, մի խոսքով, իր սեփական կենսագրության ազատ կողմնորոշում։ Այդ իմաստով Ժ.—Պ. Սարտրը տե-

---

13 А. Н. Леонтьев, նշվ. աշխ., էջ 186։

14 Б. Т. Григорян, Философия о сущности человека. М., 1973, с. 243.

15 Б. Г. Ананьев, նշվ. աշխ., էջ 328։

ղին է ասել, որ մարդը դատապարտված է ազատության, և նա ազատության տանող ճանապարհ պետք է դուրս դա մարդկային մեծ փորձով ու ինքնաճանաչման հասած լուրջ պաշարով։ Դա նշանակում է. երբ մարդը պրակտիկորեն է տիրապետում իրականությանը և սեփական ընդունակություններից ելնելով կարողանում է ճիշտ ընտրել սոցիալական արժեք ներկայացնող կողմնորոշիչները, ապա նրա ինքնագործունեությունը տալիս է ցանկալի արդյունք։ XVIII դ. գերմանացի հանրաճանաչ բնախույզ Վ. Հումբոլդտը գրում է. «...ոչինչ այնքան չի նպաստում հասնելու հասունության, որն անհրաժեշտ է ազատության համար, որքան ինքը՝ ազատությունը... անբավարար հասունությունը, որն անհրաժեշտ է ազատություն ստանալու համար, կարող է առաջ գալ միմիայն մտավոր և բարոյական ուժերի անբավարարությունից... դա պահանջում է աշխատանք, իսկ աշխատանքը՝ ազատություն, որն արթնացնում է ինքնագործունեություն»[16]։ Միայն իրականության խորը ճանաչողությունն է հնարավորության ընձեռում բացահայտելու նրա օրենքները, որն այլ բան չի նշանակում, քան մարդու արժեքների բացահայտում, իսկ նրա սոցիալական գոյության պահպանումը մղում է որոշակի կողմնորոշում մշակելու իր ներքին և արտաքին բնության նկատմամբ, այն դեպքում, երբ այդ երկու ոլորտների օրենքների բնույթն ու բովանդակությունը, ըստ իրենց ուղղվածության, տարբեր են, ինչպես նաև տարբեր են ոչ միայն նրանց ճանաչողության պայմանները, այլև միմյանց նկատմամբ առավելության հասնելու ուղիները։

Այստեղ իրավամբ հարց է ծագում, թե ի՞նչ կապ գոյություն ունի, մի կողմից՝ արտաքին բնության ու նրա օրենքների և, մյուս կողմից՝ կենսիմաստալից բովանդակություն ունեցող մարդկային ազատության միջև։ Բանն այն է, որ ազատությունն ավելի շուտ մարդու անհրաժեշտ պահանջմունքների իրացումն է, այն էլ առանց այն որոշակի նյութական արժեքների, որոնք, ստեղծվելով հասարակական արտադրության գործընթացում, հասցնում են նման պահանջմունքների բավարարման անհնարինության։ Բայց հասարակական արտադրության կազմակերպումը հնարավոր է միայն արդեն մարդու կողմից ճանաչված բնության օրենքները վերլուծելու և ճիշտ կիրառելու դեպքում։ Ուրեմն, թե՛ արտադրության առաջընթացը և թե՛ մարդու ընդլայնվող ու խորացող կենսիմաստալից ազատությունն ընդհանրապես կախված են անհատի կողմից բնության օրենքների ճանաչման խորությունից և չափազծերից։ Եթե մենք մարդկության պատմությանը մոտենանք այս տեսանկյունից, ապա ավելի նվազ կամ առավել հստակորեն է սկսում ուրվագծվել մեր տեսադաշտում նման պատկերը։ Մարդկության պատմության արտակարգ երկարաձիգ՝ մինչարդյունաբերական հեղափոխությունները, այսինքն, մինչկապիտալիստական շրջանը, բնորոշվում է արժեքային կողմնորոշման մեջ մարդու՝ բնությունից անմիջականորեն կախյալ վիճակով։ Եվ չնայած որ մինչկապիտալիստական շրջանի անհատն արդեն ուներ որոշ էմպիրիկ գիտելիքներ, սակայն նրա պրակտիկ կողմնորոշման տարածությունը սահմանափակվում էր բնության ուժերին տիրապետելու և արժեքավորելու ոչ բավարար սոցիալական հասունության աստիճանով, հետևաբար, նա մնում էր դեռ որպես բնության ստրուկ։ Դա այն պատճառով, որ պահանջների իրական կողմնորոշման թե՛ մակարդակը, թե՛ չափադիծը դեռ շատ հեռու էին մարդուն բնորոշ մարդկային բնություն կոչվելուց։ Հետևաբար, մինչկապիտալիստական շրջանն աչքի էր ընկնում հասարակական հարաբերությունների բնույթի զգալի կարևորմամբ, մարդու ազատության սահմանափակ շրջանակներով և սոցիալական կողմնորոշման պարզունակ կենսիմաստով։ Երկրորդ փուլը, որը հայտնի է որպես վաղդասակարդային հասարակությունից անցում դեպի բուրժուական հասարակարգ, իրականում անցում է գյուղական մշակույթից դեպի քաղաքային մշակույթ, որն իր չափազծով

[16] В. Гумбольдт. Язык и философия культуры. М., 1985, с. 137.

կապված է առաջին փուլի զարգացմանն անհայտ բնության լայնածավալ ճանաչողության և արտադրության աննախադեպ վերելքի հետ, իսկ վերջինս արդեն որոշակիորեն նպատակաուղղված էր դեպի ավելի բարձր սոցիալական արժեքներ, ավելի հատուկ սոցիալական կողմնորոշում, առավել բարձր արտադրության կազմակերպում։ Կողմնորոշում, որն առաջին իսկ պահից ծավալվեց որպես բնությունն իր ողջ էությամբ մարդուն ենթարկելու նախաձեռնություն, նրա բնության արժեքների նկատմամբ մարդու կենսիմաստային կողմնորոշումն արդեն սկսեց կրել ոչնչով և ոչ մի տեսակ օրենքով չսահմանափակված դրսևորում։ Բնության նկատմամբ նման կողմնորոշումն իր առավել հստակ արտահայտությունն է ստացել Ֆ. Բեկոնի երկերում. ըստ նրա, գիտության և տեխնիկայի նպատակը բնության վրա իշխելն է։ Բնության արժեքների նկատմամբ նման կողմնորոշումն աստիճանաբար ծավալվելով ձևաբ բերեց համամոլորակային չափսադիծ և նրա վրա ներգործելու՝ մինչ այդ չեղած համակարգային միջոցների այնպիսի հնարավորություններ, որոնք գործածումը ոչ միայն ապականում է բնությունը, այլև սպառնում մարդու կեցությանը[17]։ Հասունացող էկոլոգիական ճգնաժամի սպառնալիքը մարդուն ստիպում է, որպեսզի նա իր գործունեությանը հաղորդի ավելի հիմն և ավելի կենսիմաստային սոցիալական կողմնորոշման արժեքույթ։ Անհատը ստիպված է ավելի զգույշ և ավելի խորը ուսումնասիրել բնության և մարդու հավասարակշռության օրենքները, ուր համագոյակցում են ազգերի տնտեսական, մշակութային և սոցիալական կյանքի աղատ ձևերը[18]։ Ժամանակակից մարդը մեր օրերում ստիպված է հնարավորին չափ ներդաշնակ հարաբերություն զարգացնել բնության հետ, խելացիորեն իմաստավորել նրա արժեքները և ճիշտ հասկանալ զարգացման գործընթացները՝ նպաստելով նրա հետագա համամոլորակային հումանիզացիային, հոգուտ ինքնահրաժարման։ «...Ինքնահրաժարումը,— գրում է Ա. Շվեյցերը,— պետք է ի կատար ածվի ո՛չ միայն հանուն մարդու, այլև հանուն մյուս էակների և ընդհանրապես հանուն ամեն մի կյանքի, որ հանդիպում է աշխարհում և հայտնի է մարդուն»[19]։ Բացի էկոլոգիական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և գիտության ոլորտների ընդհանրական կողմերն արտացոլող օրենքներից, որոնք փիլիսոփայության և սոցիոլոգիայի հետազոտություններն իմաստավորող յուրակերպ օրենքներ են, գործում են նաև օրենքներ, որոնք չիմանալը կաշկանդում է մարդու սոցիալական կողմնորոշման իրականացմանը։ Դրանք այն օրենքներն են, որոնք ներկայացնում են անձի սեփական անհատականության՝ կենսաբանական և հոգեբանական առանձնահատկությունները։ Նախ, այդ օրենքները անմիջականորեն են շոշափում մարդու կենսական շահերն ու պահանջները։ Երկրորդ, պահանջում են սեփական անձի նկատմամբ ցուցաբերել արժեքնահատիչ անհատական իմաստավորում, ինչպես նաև գիտակից ու կշռադատված կողմնորոշում՝ սեփական որոշում։ Անձի կողմից այս կամ այն որոշման ընտրությունը՝ նրա ինքնակողմնորոշումը հաստատելու որո-

---

17 Տե՛ս Б. Т. Григорян, նշվ. աշխ., էջ 247։

18 В. И. Вернадский, Избранные сочинения, М., 1960, т. 5, с. 210—211. Տե՛ս նաև Г. С. Гудожник, Научно-техническая революция и экономический кризис, М., 1975; О. С. Колбасов, Экология, Политика—право, М., 1976; Человек—наука—техника М., 1973; И. Т. Фролов, Перспективы человека, М., 1983; նույնի՝ Прогресс науки и будущее человека (опыт постановки проблемы; дискуссии; обобщения), М., 1975; նույնի՝ О человеке и гуманизме: Работы разных лет. М., 1989; В. А. Лось, Человек и природа, М., 1978; Н. Н. Моисеев, Универсальный эволюционизм (Вопросы философии, 1991, № 3; А. Д. Урсул, На пути к информационно-экономическому обществу (Философские науки, 1991, № 5); Социально-философские проблемы экологии, Киев, 1989; Философские и социальные вопросы экологии (Тезисы докл.), Харьков, 1985.

19 А. Швейцер, նշվ. աշխ., էջ 297։

շակի տրամաբանական ուղղվածությունը, պայմանավորված է մարդու սեփական բնույթով, ներքին կառուցվածքով։ Անձի կողմից որոշումներ ընդունելու գործընթացը կարելի է ներկայացնել որպես պրակտիկ արժեք ունեցող չորս գործոնների համադրություն. 1) իշխող տեղեկատվություն՝ շարժառիթների մասին. 2) տեղեկատվություն արտաքին իրավիճակի մասին ամբողջությամբ, որից՝ 3) մարդու ընկալումը առանձնացնում է այնպիսի փաստեր, որոնք ազդանշան են դառնում այս կամ այն արժեկողմնորոշիչ գործողությունների ավարտի մասին, 4) այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են մնալ իբրև տվյալ կողմնորոշման կողմնակի պայմաններ։ *Տեղեկատվության տեսակներից առաջին երկուսն իրենց արժեկողմնորոշման իմաստով արտահայտում են մարդկային անձի կառուցվածքը և նրա իմաստնացած փորձը, իսկ հաջորդ երկուսը վերաբերում են արտաքին իրավիճակին, այսինքն, անձի կողմից ընկալված արժեկողմնորոշիչ անհատական իրավիճակին։ «Առանց նման անձնային, ստեղծագործական վերակողմնորոշման (համընդհանուր սոցիալական փորձի և դիտելիքների) ո՛չ գիտության մեջ, ո՛չ էլ արվեստի մեջ չի կարելի հասնել այդ ոլորտներում միակ հնարավոր արդյունքի՝ եզակի գիտական հայտնագործության կամ սեփական անձի անհատական գեղագիտական հնարամտության»*[20]։

Մարդու անհատականության ազատ կողմնորոշումը իմաստավորվում է՝ նախ, երբ դրսևորվում է ոչ միայն սոսկ որպես անհատական գործողությունների ինքնարժեքավորում, այլև ներքին որակական տեղաշարժ, ներքին մղում, ներքնաբուխ ուժի արտահայտում։ Երկրորդ, երբ անձի ներքին ճիգերն աստիճանաբար ստանում են բավարար սոցիալական արժեքավորում՝ որպես արժեք և արժեհաստատում։ Հարկ է նշել, որ արժեքների խնդրի կարևորության անհրաժեշտությունն ու հրատապությունը պահանջում են, որ ուսումնասիրության գործը չպարփակվի միայն փիլիսոփաների հետազոտությունների սահմաններում, որովհետև բնության և սոցիալական բյուր արժեքների նկատմամբ մարդու սոցիալական կողմնորոշման հարցը միաժամանակ նրա հոգևոր և ֆիզիկական ինքնահաստատման ու հարստացման հարց է, որն իր հերթին օբյեկտիվորեն պայմանավորված է անձի սոցիալական կողմնորոշման կատարելագործման որակական թռիչքով։ Անձի արժեկողմնորոշման անհատականությունը, ինչպես և նրա վարքն ամբողջովին որոշվում են նրանով, որ «Իր ձևավորման, գործունեության և զարգացման մեջ անձը օժտված է ազատությամբ և ինքնուրույնությամբ»[21]։

Արժեք տերմինի կիրառման փիլիսոփայական իմաստը մարդու կենսական կարիքների համար ցանկալի և անհրաժեշտ, սոցիալականորեն որոշակի ձևով պայմանավորված օբյեկտների հաղորդակցական շարքն է։ *Դրանից բոլորովին չի բխում, թե վերոհիշյալ տերմինի կիրառումը արժեքների փիլիսոփայական տեսության կողմից ընդունվել է միարժեք իմաստով և ոչ քննադատական մոտեցմամբ։ Դա բոլորովին այդպես չէ, քանի որ անգամ մակերեսային վերլուծման դեպքում ևս մենք աստիճանաբար հանդում ենք այն եզրակացության, որ այսպես ասած, արժեքային իրավիճակն ինքն անգամ ենթադրում է այն գործոնի առկայությունը, որ կա արժեքավորողի և արժեքավորվողի դիալեկտիկական սերտ փոխհարաբերության մեջ*[22]։ *Միլիոնավոր տարիների ընթացքում բնությունը* արժեքային կողմնորոշման հանապարհին *աստիճանաբար կատարելագործել է մարդու զգայաշարժիչ ապարատը, ստեղծելով տեղեկություն ընդունելու և հաղորդելու որոշակի բարդ հոգեբանական մեխանիզմ, որը սովորեցնում է նորածնին շնչել, ծծել, ուտել և տարբերել մարդկային դեմքի գծերը, այսինքն, այն բնածին ռեֆլեքսները, որոնք միաժամանակ ընդգրկում են պոզիտիվ ընտրողականության և ինքնակողմնորոշ-*

---

20 В. С. Библер, Мышление как творчество, М., 1975, с. 57.

21 Л. П. Буева, Социальная среда и сознание личности, М., 1968, с. 16.

22 *Տե՛ս* В. Т. Григорян, *նշվ. աշխ., էջ 200։*

ման տարրեր։ Եվ երբ կարիք է լինում ծայրահեղ դեպքում դրսից միջամտելու նշված գործողություններին, ապա միջամտությունը հանդիպում է ակտիվ դիմադրության։ Ուրեմն կարող ենք ասել, որ նորածին մանկան մեջ անգամ սոցիալականացման և սկզբնական շրջանում անգիտակցական բնույթի կենսաբանական արձագանքները պարունակում են արժեկողմնորոշիչ դրսևորման տարրեր։ Մարդու ձևավորման ու գոյության հարցը որոշվում է իր շրջապատում, նրա որոշակի արժեկողմնորոշմամբ և որոշակի հոգևոր փոխգործողության շնորհիվ, որի պահպանումն էլ հենց իրենով ապահովում է անհատի սոցիալական կողմնորոշման որակական կողմը, նրա կյանքի մարդկային իմաստը, քանի որ այդօրինակ գոյությունն այս կամ այն կերպ երաշխավորվում և որակավորվում է մարդու կողմից, հետևաբար այն կարելի է դասել ամենաիմաստայից և ամենաարմատական արժեքային տարածության շարքում։ Անձի արժեքային տարածությունն ըստ էության շրջապատի հետ նրա փոխգործողության որոշակի ընթացքն է, որը էվոլյուցիա է ապրել որպես կենսիմաստայից ոլորտների արտեքայրն համակցություն։

Անհատի կենսուղին տեսական մտքի պատմության մեջ արձանագրվել է իբրև այնպիսի շարժում, որը ցանկալի պայմանների ստեղծման իմաստով օբյեկտիվորեն ուղղված է որոշակի արժեքների հետ անձի ներքին գնահատականին համապատասխան փոխգործողության հուսալի կապի հաստատմանը։ Ըստ Ա. Պետրովսկու, «ներքին ճնշաչափը» անձի գնահատականն է։ Մարդը համեմատվում է նրա ցուցումների հետ, կազմակերպելով իր հարաբերությունները, մտնելով շփման մեջ, գործելով ակտիվորեն։ Նրա կոնստրուկտորը, ինժեները և կարգավորողը սոցիալական խումբն է, նրա մեխանիզմը՝ սոցիալական սերտ շփումների, կողմնորոշումների և արժեքների ներքին (interior) մեխանիզմը»[23]։ *Այդ ճշգրտումը տեղի է ունենում առավելապես անգիտակցաբար, և անձը ինքնաբերաբար հարմարվում է վարքի այն գործելապայմաններին, որոնք նշանակված են այդ ցուցումներում*[24]։ *Անգիտակից ասելով, բոլորովին էլ չի նշանակում, թե անձի վարքը չի ինքնավերահսկվում կամ չի ինքնակառավարվում իր կողմից, քանի որ նա օժտված է այն անհրաժեշտ հոգեբանական գործիքակազմով, որի միջոցով կարողանում է արձանագրել իրեն հետաքրքրող (ինքնագնահատականը, սպասվող գնահատականը, անձի կոլմիկ խմբի գնահատականը) ցուցանիշները, որոնք ձևավորվում են մարդու գիտակցական կյանքում՝ ստեղծելով սոցիալական արժեքների մի ամբողջ կառուցվածքային ոլորտ։ Նման արժեքային ոլորտներում թե՛ սաղմնային կենտրոնի, թե՛ սուբյեկտիվ բևեռի դերում հանդես են գալիս այն կենսաբանական պահանջները, որոնց դրսևորումը խոսում է ինչ-որ բանի բացակայության մասին կամ խորհրդանշում է որոշակի ժխտում՝ կապված օբյեկտիվ հանգամանքների հետ։ Պահանջը կապված է «ժխտումը» հաղթահարելու այնպիսի ձգտման հետ, որը ծնվել է սուբյեկտի մեջ օբյեկտիվի միջոցով, վերջինիս հիմքի վրա, ուստի պահանջից առաջացած ձգտումը, կողմնորոշված լինելով դեպի մարդուն շրջապատող* արժեքային կենսատարածքը, *ջանում է գտնել այնպիսի օբյեկտներ ու երևույթներ, որոնք կբավարարեին նրա պահանջների շարժընթացը։ Այսինքն, եթե կան համապատասխան օբյեկտներ, ապա անհրաժեշտորեն ստեղծվում է նաև այնպիսի* կենսաբանական ոլորտ, *որն ապահովված է* կենսաբանական պահանջներով և օբյեկտիվներով։ *Ի տարբերություն մյուս էակների, մարդու մարմնի ինքնատիպ սոցիոգեն կառուցվածքն իր կենսատարածքում որոշակիորեն նպատա-*

---

23 А. В. Петровский. Личность. деятельность. Коллектив, М., 1982, с. 123. *Այստեղ հասկացությունն օգտագործվում է՝ նկատի ունենալով լատինական* interior-*ներքին արմատը, որ նշանակում է մարդկային հոգեկանի ներքին կառուցվածքների ձևավորում, շնորհիվ արտաքին սոցիալական գործունեության։ Այն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվեց ֆրանսիացի հոգեբաններ Պ. ժանի, Ժ. Պիաժեի, Ա. Վիլլոնի և մյուսների կողմից։*

24 *Նույն տեղում։*

նաուղղված է դեպի այն կողմ, որն իր հերթին շղթայական կապով փոխպայմանավորված է գոյություն ունեցող ողջ մարդկության արժեքային աշխարհագրական առարածության հետ: Օրինակ, թե՛ երեխան և թե՛ մեծահասակն ունեն այնպիսի սոցիալական անհրաժեշտ պահանջներ, որոնց կողմնորոշիչ իմաստը արտահայտվում է ուրիշների հետ շփվելու, հաղորդակցվելու զգացումներով, որոնք դարերի ընթացքում ոչ միայն մարդու կողմից մշակվել, հղկվել, ձևավորվել և հաստատվել են, այլ միաժամանակ ստեղծվել է դրանց բավարարման միջոցների հնարավոր գործիքակազմը: Նախքան վերոհիշյալ գործոնների՝ երեխայի ներքին կարողության փաստի վերածվելը, դրանք արդեն ներկայացված էին միջանձնային կամ միջմարդկային սերտ շփման մեջ: Ընտանիքը, ուսուցիչները, ընկերները, գրքերը երեխայի մեջ ակտիվորեն ձևավորում են բարոյական պատկերացումների այն «շափանմուշային» շարքը, միաժամանակ և «սուբյեկտիվ» շարքը, սովորեցնելով նրան տեղին համադրել դրանք, և դաստիարակության ճիշտ կազմակերպման դեպքում տեղի է ունենում այդ երկու շարքերի առավելագույն մերձեցում: Անհատն սկսում է գնահատել շրջապատող աշխարհն այն նույն ցուցանիշներով, որոնցով նա գնահատում է իրեն՝ (ինքնագնահատում), նախօրոք սովորելով իրեն հավասարեցնել ուրիշներին[25]: Նման զարգացումը երեխային հնարավորություն է տալիս աստիճանաբար տեղափոխվել ավելի հասուն մարդկային աշխարհ՝ իր հասուն արժեքների «աշխարհով»: Աշխարհ, որ բոլորովին նոր է ոչ միայն երեխայի պահանջները բավարարելու միջոցներով ու եղանակներով, այլև նոր է նաև թե՛ իր սովորություններով և թե՛ մշակույթի և սոցիալականորեն հասուն ու կողմնորոշիչ արժեքների համապատասխան նշաններով ու կողմերով: Այստեղից էլ հենց սկսվում է մարդկային հասուն սոցիալական արժեքների ոլորտը, որտեղ անձի արժեքներին զուգահեռ ստեղծվում են այնպիսի սոցիալական արժեքներ, որոնց առկայությունը ոչ միայն չի բացառում սուբյեկտի կենսաբանական պահանջմունքների ոլորտը, այլ ընդհակառակը, վերջիններս փոփոխման են ենթարկվում նշանների համակարգի կողմից: Տեխնիկական բարդ միջոցները մարդուն հնարավորություն տվեցին միջմարդկային կենսիմաստալից արժեհարաբերություններին զուգընթաց ձևավորել և հաստատել նաև այնպիսի կայուն և կողմնորոշիչ հարաբերությունների համակարգ, որոնք մարդկությունն ստեղծել է բավարարելու մարդու բազմաթիվ կուլտուրական պահանջները:

«Արժեքները, որոնք մարդկության կողմից ստեղծվել են նրա պատմական զարգացման գործընթացում, մշակութային իմաստ են ձեռք բերում այն չափով, որ չափով առանձնացվում են անհատների գիտակցության և վարքի մեջ, անցնելով նրանց գործունեության ակտիվ միջոցների զինանոցով: ...Այդ հիմքի վրա է ձևավորվում անձի արժեքային կողմնորոշումը, որն իր դրսևորումն է գտնում ճաշակի ընտրողական ընդունակության և դեղագիտական պահանջմունքի յուրակերպության մեջ»[26]:

Ստեղծված արժեքային ոլորտը կոչվում է նաև էկոլոգիական ոլորտ: Քանի որ մարդու առավել հիմնային և առավել անհրաժեշտ պահանջները պայմանավորվել են նրա գոյապահպանությամբ, մարդկության պատմության ընթացքում հասարակական մարդու ամենահիմնային ընդհարումը և հակասությունը կապված է եղել կենսագոյապահպանման արժեմիջոցների հետ: Պատմափիլիսոփայական իմաստով այն ի սկզբանե յուրաքանչյուր սոցիալական նոր իրավիճակում եղել է մարդկային հիմնարժեքների ղեկավար իմաստավորող կողմը, որովհետև նորաստեղծ պայմաններն անհատից միշտ պահանջել են նոր վերակառուցում և վերակոդմնորոշում նոր իրավիճակին համապատասխան: Սա հարցի մեկ կողմն է: Երկրորդ կողմը ենթադրում է, որ երբ մարդն ընդունում է այս կամ այն որոշումը որոշակի արժեքների նկատմամբ,

25 Տե՛ս նույն տեղում, էջ 123—124:

26 Л. И. Новикова, Эстетика и техника: альтернатива или интеграция, М., 1976, с. 48—65.

սկսում է գործել նրա ինքնակողմնորոշիչ մեխանիզմը (կողմնացույցը)։ Որոշումներ ընդունելով և դրանք իր արարքներով իրականացնելով՝ անհատը միաժամանակ սկսում է աստիճանաբար ինքնակողմնորոշվել և ջանալ իր համար իմաստավորել և ճշգրտել մյուս մարդկանց դիրքորոշումն իր նկատմամբ՝ դրանով իսկ ի հայտ բերելով նրանց կենսիմաստային կողմնորոշման մեջ իր սեփական վարքագծի և ապրումների այլ տեսանկյուններ, որի հաշվին սուբյեկտը շարունակում է «ապրել ինքն իր մեջ»։ Ըստ երևույթին, սուբյեկտին հաջողվում է «ներդրվել» նաև ուրիշ մարդու մեջ և իրեն փոխհաղորդել (transmit)նրան միայն այն դեպքում, երբ վերջինս պատրաստ է ընդունելու իր սեփական անձնային «ներդրումները» և ձուլել դրանք, ջանալով ինչ-որ բանում իրեն «նմանեցնել» մեկ ուրիշին[27]։ Այդ տեսանկյունից ընտրության յուրաքանչյուր ակտ պարունակում է արտաքին և ներքին այնպիսի սերտ դիալեկտիկական միասնություն, որն էլ իր հերթին հասցնում է այն հակասությունների վերջնական լուծմանը, որոնց հետ բախվում է անհատը արժեքային կողմնորոշման ամեն մի աստիճանում։ Կենսիմաստային արժեկողմնորոշման մեջ հակասությունների առկայությունը խթանում է անձի կատարելագործումը։ Դեռ Հեգելն էր գրում, որ «հակասությունը ճշմարտության չափանիշ է, հակասության բացակայությունը՝ մոլորության չափանիշ»[28]։ Երբ արդեն որոշումն ընդունված է արտաքին ընտրության նկատմամբ և միաժամանակ արձանագրված վերջինիս վարքը, ապա հետևում է միջանկյալ վճիռն այն մասին, որ այժմ և հենց այս պահին հարկավոր է անել այս բանը և ոչ այլ բան։ Այսինքն, հաշվի են առնվել որոշ արժեքներ և մերժվել մնացած բոլոր արժեքները։ Արժեքային կողմնորոշման ներքին պատճառը դառնում է անձի արարքի իրական շարժառիթը՝ միաժամանակ ձեռք բերելով որոշակի իմաստալից կեցություն, որն էլ իր հերթին ծնում է հույզեր, տրամադրություններ, ապրումներ և այլն։

Այսպիսով, «Անձի կենսիմաստային կողմնորոշում» հիմնախնդիրը բովանդակայնանում է «աշխարհայացք», «ազատություն», «մշակույթ», «նպատակաուղղվածություն», «ինքնահաստատում», «պահանջմունք», «իդեալ», «սոցիալական արժեք» հիմնագործոնների մեջ։ Կենսիմաստը ծագել է մարդու հետ և նրա բնույթին համարժեք, այն արտացոլում է այդ բնույթին համապատասխան առավել էական հատկությունները և միաժամանակ դառնում նրա արմատական հիմքերի ներքին էական երաշխիքը։ Այսինքն, այնպիսի երաշխիք, որից դուրս հազիվ թե հնարավոր լինի մարդու գոյությունն աշխարհում։

СУЩНОСТЬ ЦЕННОСТНОЙ ЖИЗНЕННОЙ ОРИЕНТАЦИИ ЛИЧНОСТИ

Г. Ш. МОКОЯН

Резюме

Проблема жизненной ориентации личности, ее характер и существование в материальном, духовном и нравственном аспекте, ее формирование и предназначение, ее будущие тенденции—одна из важных проблем, требующих разрешения на протяжении истории. Она существует и в наши дни—не только как весьма сложная и обширная, но и как актуальная научная проблема. Человеческая деятельность носит целенаправленный характер, следовательно, она неразрывно связана с ценностной ориентацией. Человеческая личность живет в мире социальных образцов и нормативных структур. Это то *социальное поле*, которое определяет ее поступки, деятельность, отношение к самой себе и к социальному окружению.

---

27 Տե՛ս А. В. Петровский, նշվ. աշխ., էջ 249։

28 Гегель, Работы разных лет, М., 1970, т. 1, с. 265.